ՃԱՆԱՊԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՋՈՒԱՐ ՃԻՑԷՐՃԻ ՕՂԼՈՒ ՓԱՀԱՆԱՑԻ

(Տես երես 129։)

Բ. Եւ այսուհետև սկսանիմք զսուրբ Յակոբայ վանիցն շէնքն և զկերպարանքն մի ըստ միոջէ նշանովն և տեղեաւն։

Սուրբ Յակոբայ դուռն զարմանալի երկաթաշէն մեծ. և ունի 'ի մէջ տեղն փոքր պօրմէ դուռ մի. և ունի մանուռ-սեն դափուռնի[1] որ նորա մանուռպ[2] է, և կայ օտա մի միշտ միսաֆիրն անդ նստին. և միւսն զաբուճուն է. և կայ փոքր սէր մի որ աստ նստի եասախճին. և ունի օլոֆէ[3] ամիսն մէկ ոսկի։ Գնա, եղբայր, 'ի ներս. կայ աջ կողմն փոքր պարմախլրդ. մի որ լաթ վլանալու զանեներն անդ է. ով ուզէ կ'առնէ կ'երթայ պաղչան լաթերն կու լուան։ Այս պարմախլրխին մէջն շատ մարդ հափս կ'անեն։ Եւ ձախ կողմն վէքիլին օտային դուռն է. և կայ սորա քով պապա Մինասին օտային դուռն է. քիչ մը առաջ, աջ կողմն սէթ մի. յորժամ մեծ մարդ մի գայ նէ՝ նորա ձին անդ կապեն։ Եւ քիչ մի այլ առաջ մեծ սէթ մի որ անդ ծախեն ղմոմն և ղնչխարքն։ Եւ այլ յառաջ աջ կողմն՝ մեծ օտայ մի որ փոշէտուն կոչի. և սորա դիմաց օտապաշուն օտան է, երկու դաթէ. է սորա քովն մեծ պարմայ–դափու, և ունի քովն փոքր դուռ մի՝ որ անտի ելանեն 'ի մէյտանն. աջ կողմն կայ սէթ, և 'ի վերայ նորա ասմալրխ. սորա քովն է հոգեւորունն մեծ և քէմէրներով, և չորս սիւն և լուսամուտ. նոր եկող բիստաւորք անդ նստին, մինչև դարպասն առնեն, և ապա օտայ տան. և կայ հինգ կանթեղ, և կայ սորայ քովն հանդբստարան ալէքսիէ. և սորա քովն կայ փոքր հոգեւորունն, որ միայն անդ նստաք. ունի սորայ կից մեծ և ահագին ախոռ մի. առաջքն չորս քէմէր և դուռն, քէմէրն առաջքն տասնուհինգ ոտք. ընդ ամէնն քսան մէկ քէմէր, ամէն քէմէրին աչքն տասնըհինգական ոտք. քէմէրներուն ոտքն երեսունուերկուական թիզ երկայնութիւն, վաթսուն ատրմ. և լայնութիւն քսանեօթն ատրմ. ունի եօթն լուսամուտ և ունի փոքր փէքէ մի և կայ մէջը երկու հոր. ամէն քէմէրի ոտքն չորս կողմն երկու թիզ լանքն, և կլոր քար որ դուրսէ մէջտեղն ծակ է, և պատերն նոյն գունակ. և 'ի վերայ սորա նոր շէնն և պէքարի օտաներ, որ երկու կամ երեք մէկտեղ կառավարին. մինչև 'ի յելս ըիստաւորաց և ներքևն մեծ հոր մի որ խաշինք նորա կու զուանան. և սորա մէրտիվէնին քով ունի սիրուն օտայ մի որ դաբուռ եապայ է, կարմիր խաֆէններով, և դուռն հանապազ փակ է. որ անդ նըստեր ողորմած հոգի մահտեսի խաչատուրն, և այժմուս Քէլէշ մահտեսի Սարգիսն նստաւ։ Եւ սորայ քովն է պաղչային դուռն, և ներքևն կայ մեծ օտայ մի. և պաղչան սիրուն մեծ նըստելու տեղ, բայց ամայի է. ունի ճանապարհ որ գնան սուրբ Հրեշտակապետ. և կայ քովն օտայ մի դրան քովն որ պաղչապանն անդ կու նստի։ Եւ սորայ քովն քէմէր տեղ մի մեծ. գնաս ներս, կայ անդ մեծ բակ մի որ թաշուշիանուսի է. ունի մեծ քիւմէս մի, չորս տապաղա[1], և անդ բանին ամառն ղվանից բաներն. և սորայ դուրսն քէմէրին ներքև՝ շարապիանուսի. և կայ ըրախի հանելու տեղ, և մեծ տեղ մի որ ձիան կապեն և կով կթեն և քիրէձի հոր։ Եւ միւս կողմն փախստականներուն հոգեւորունն, որ 'ի գալն նոցա՝ անդ ընուն. և երթայ տիրացու Հէննէն՝ գրէ զանուանս նոցա։ Անդ տեսայ որ ոչինչ

1 Յատուկ դռնապան։
2 Պաշտօն։
3 Թոշակ։

1 Ատիճան, կամ յարկ։

կու թռչի, ցէրն փրկէ. — և կայ օտա-
ներ փախստականներուն. և սորայ քով
կայ տիւրկէրի օտայ մի որ անդ է ԶէհՀօտ
Յովակիմն. Կեսարացի է. նայ է թաւոխ-
ճին. և ունի դրանն վերայ սիրուն ասանա-
լրխ մի։ Եւ է կից սորայ փոքրիկ օտայ մի,
որ արուեստաւորք կու բանին. և կայ
սէթ մի նեղ, և է ծարն սորայ մէրտիվէն
չորս դատեմ մէրտիվէն. և տակն օտայ
մի, ներսն սէթով, և օճախն դուրսն
է. և միւս մէրտիվէնն, որ ամէնն տաս-
նուհինգ ոտք է։ Եւ ելանելն 'ի գլուխ
սորայ՝ դիմացն է Համբարձումն. հա-
նապազ կ'երևի։ Եւ այս թաղս Ակնցոց
թաղ կու անուանի. և քոչէ տեղն օտան
որ մէք նստանք՝ ունի երկու բէնիրէ,
մինն հոգեստունն կը նայի, և միւսն սբ
Յակոբայ դին Էջմիածին կու հայի։
Կայ սիրուն հոր մի որ աստի խմեն ըխ-
տաւորք. և ունի բաղում թաղս. ոմն
ցորենի թաղ կու անուանի. այս ցորե-
նի թաղին քովն է շորէտներն [1]. և այս
թաղս վայ երեսուներկու օտայ։

Գնաս այլ յառաջ փոքր մէրտիվէ-
նով. և կայ աստ երկու օտայ. այլ յա-
ռաջ կայ երկու օտայ ալ. սոքա ներքև-
ներն ունին օտայ, սորայ արևն կայ
դէպ 'ի վար փոս տեղ մի, որ Չիլինկէ-
րի օտայ է. եկող արուեստաւորքն անդ
բանին 'ի պէտս կարեաց։ Եւ կայ աստ
երկու օտայ. և սորայ վերան հաւու
թաղ. տասուերկու աստիճան մէրտի-
վէնով վեր կ'ելնիս. և երկու օտայ մէր-
տիվէնին գլուխն. և կայ մեծ բակ մի,
երկու օտայ ևս անդ կայ, և այլ յա-
ռաջ երեք օտայ. և սորա մէրտիվէն
միւս կողմն կ'ելնես. անդ է Զախճի թաղն.
և անդ օտայ երկու. և սորա ներքևն
ջաղարճն [2] մեծ և շէն, որ ունի մէջն ե-
րեք հոր և ձեռն կապելու տեղ. և կայ
մէջն հաւի տուն և աղաւնու և անդ
կայ Ձիթահանի տեղ. վերի կողմը մեծ
սուֆայ, և խոշոր մաղեր և ամենայն
ինչ զարդարեալ է 'ի պէտս վանից և
ուխտաւորաց. կեահի ըխտաւորի ցո-
րեն կու աղայ, քիլէն ութ փարայ, կամ
տիկն երկու փարայ։

Եւ կայ վանից կռնակն փոքր եօ-
խուշ մի, և 'ի ծայր սորա փոքր դուռ
մի որ մտանէ ներսի թաղն, որ Ստամ-
պօլցոց թաղ կոչի. վերով վարով ներ-
քեւով բաղում փոքր փոքր մէրտիվէն-
ներով, մուֆվախներով, և հանգստա-
բաններով. ամէն թաղն հորերով. այն-
պէս դրացնութիւն անելով, ոմն չոհ-
րայ մանելով, ոմն քէրկէֆ, և ոմն դեր-
ձակութիւն, և ոմն պպուձուրիւն. և
ոմն հանապազ ուտելով խմելով մէս-
տիմիշտամ [1]։ Եւ աստ կայ փոքրիկ սի-
րուն եկեղեցին՝ անուն սուրբ Թորոսայ.
և յորժամ պահուց [2] առաջի շաբթուն
ուրբաթ իրիկուն սուրբ Յակոբ ժամ
կ'ասեն և յետոյ ամենեքեան շուրջառու-
րին, մոմեր 'ի ձեռին ունելով նախա-
տօնակ կ'անեն, կու ելանեն եկեղեցնայ
և գնան մինչ 'ի յանդ. հայլի [3] ճանա-
պարհ է. գնացողք գիտեն, չգնացողքն
այլ արժանի անէ Աստուած. — յետոյ ա-
ռաւօտ՝ որ է տօն սուրբ Թորոսայ, անդ
պատարագ կու մատչի. և ունի դրան
քով սէթ մի, և 'ի միջի սէթին թզի
ծառ մի. և կայ քովն փոքր մէրտիվէն
մի որ ներքոյ ճանապարհ կ'երթայ. և
զոր ինչ օտայ կայ, ով ոք առեալ է
զայս օտաքս՝ 'ի դրանն վերայ յիշատա-
կըն գրեալ կայ, և ըխտաւորք ըն-
թեռնուն և ողորմիս կու կարդան իւ-
րեան հոգոյն։ Եւ կայ մեծ մէյտան որ
դալտրըմ է սուքած [4] և մէջ տեղն եր-
կու սէթ. էբրաֆն պարմախլրխ. և 'ի
մէջ սոցա զէթունի ծառ. և կայ մին
սէթ այլ, մին կողմն հոր է և միւս կող-
մըն մեծ թաղար. կայ սորայ դիմաց խա-
նութ մի։

Եւ այսուհետև գաւիթն լմնցաւ, և
կամիմք մտանել 'ի սուրբ Յակոբայ մի-
ջի եղեալ պայծառութիւնը պատմեմք։

1 Լաթի, զգեստի տուն։
2 Ջաղացք։

1 Գինով։
2 Մեծ պահոց։
3 Շատ։
4 Քարայատակ ըրած։

Կը շարունակուի։